Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԻՄ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«05» 09 2011 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Գրադարանը համալսարանի կարևոր ստորաբաժանումներից մեկն է, որը ղեկավարում է գրադարանավարուհին:

Գրադարանավարուհին անմիջապես ենթարկվում է համալսարանի ռեկտորին, կատարում է նրա հանձնարարությունները, ինչպես նաև ընդհանուր բաժնի վարիչի, դեկանի ցուցումները:

Գրադարանավարուհու հիմնական գործառույթներն են՝
ունենալ.

1. գույքային /ինվենտար/ մատյան,
2. անձնական օգտագործման քարտեր,
3. գրքերի քարտադարան,
4. ուսանողների քարտադարան,
5. այբբենական քարտադարան,
6. առարկայական քարտադարան,
7. սիստեմատիկ /թեմատիկ/ քարտադարան:

Գրադարանից օգտվելու կանոնները

- Գրադարանից օգտվելու իրավունք ունեն Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները, ուսումնաօժանդակ աշխատակիցները:
- Ընթերցողական քարտն ընթերցողին սահմանված կարգով իրավունք է տալիս օգտվելու գրադարանի կողմից մատուցվող ծառայություններից: Այն, կախված ընթերցողի կարգավիճակից, վավեր է մինչև ուսումնառության ավարտը, իսկ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համար քարտի ժամկետը կախված է տվյալ աշխատակցի և բուհի միջև կնքված պայմանագրի տևողությունից:

Վնասների փոխհատուցման կարգը.

- Գրականությունը չվերադարձնելու դեպքում յուրաքանչյուր գրադարանային միավորի համար ուսանողը վճարում է տուգանք՝ սահմանված կարգով:
- Գրականությունը հանձնելիս՝ թերությունների հայտնաբերման դեպքում ուսանողը պարտավոր է վճարել վնասված գրքի վերականգնման արժեքի եռապատիկ չափով:
- Գիրքը կորցնելու դեպքում ուսանողը պարտավոր է հատուցել կորցրած գրքի գնի եռապատիկը կամ վերադարձնել նույն հրատարակության այլ օրինակ: